ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«17» 04 2013թ. N 09/2-9-3/2888-13

Ձեր

“ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ’’ ՀԿ-ԻՆ

Ի պատասխան “Ինֆորմացիայի ազատության կենտրոն” ՀԿ-ի իրավաբանի սույն թվականի ապրիլի 10-ի թիվ 197-5 գրության՝ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով:

“Տեղեկատվության ազատության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի համաձայն տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական կյանքի գաղտնիությունը:

Հետևաբար, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից “Ինֆորմացիայի ազատության կենտրոն” ՀԿ-ի իրավաբանի նախորդ հարցմանը թերի պատասխան չի տրամադրվել, հիմք ընդունելով օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն, 010 560 482

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30

http://www.mss.am info@mss.am